



ՓԱՅԼԱԿ ԾԻԱԾԱՆ՝)

(Ա լսարանի սան)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



յդ ի՞նչ հմայք էր, վարպե՛տ, հոգուդ խորը քաղնված,
Որ առաջին ի՛սկ քայլից ամենքին գերեց, հմայեց.
Այդ ի՞նչ ուժ էր կախարդիչ քո սրտի մեջ ամբարված,
Որ բո՛հ՝չք ավեց քո մտքին, ու քեզ փառնով պսակեց:

Ինչ որ առիթ խնամքով ժողովրդի հոխ ծոցից,
Այն եւս դարձրիք դու նրան, մի նոր փայլով բոցավառ.
Եվ ուր քո խոսքն է շեն, այնտեղ չկա այսօր քախիծ,
Այնտեղ կա կյանքը միայն ժողովրդիդ խանդավառ:

Հայրենիքը քեզ համար հարազատ էր, քանկազին,
Դու փառել էիր նրան, ինչպես որդին իր բարի մոր,
Եվ նա գուրգուրաց քո վրա, սիրեց քեզ սիրով ուժգին
Ու զարդարեց սիրո պսակով հակառը քո քրոնաթոր:

Հայոց պայծառ երկնքում ոսկեշող մի աստղ ե՛ս դու,
Հայոց խնդուն աշխարհում մի Արարատ սիգապանծ.
Լայնածավալ, ժպտուն ծովի պես անսպառ ե՛ս դու
Ո՛վ դյուրիչ երգերի մեծ վարպետ գերազանց:

Այդ ի՞նչ հմայք էր, վարպե՛տ, հոգուդ խորը քաղնված,
Որ առաջին ի՛սկ քայլից ամենքին գերեց, հմայեց.
Այդ ի՞նչ ուժ էր կախարդիչ քո սրտի մեջ ամբարված,
Որ բո՛հ՝չք ավեց քո մտքին, ու քեզ փառնով պսակեց:

*) Փայլակ Ալեքսանյան: